

# Հ. ԼԵՆԻՆ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ  
ՅԵՎ  
ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ



Գ Ե Տ Հ Ր Ա Ց

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՐԱՑԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՅԵՐԵՎԱՆ • 1938

02 JUN 2005

Պրակտուարներ բոլոր յերկրների, միա

1 DEC 2009

3K23  
U-78

Վ. Ի. Լենին

ար.

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՎ

ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

Գ Ե Տ Հ Ր Ա Տ  
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՐԱՎԱՆԱԿՐՈՑԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵՎԱՆ • 1988

1.1 SEP. 2012

2078

Թեղիսներ<sup>1</sup>

1. ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄԸ, ՍՈՑԻԱԼԻԶՄԸ ՅԵՎ  
ՃՆՇՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Իմպերիալիզմը կապիտալիզմի զարգացման ամենաբարձր ստադիոն է: Առաջալոր յերկրներում կապիտալը գերածել և ազգային պետությունների շրջանակներից, կոնկորենցիալի տեղը նա դրել և մոնոպոլիան, ստեղծելով սոցիալիզմի իրազործելիության բոլոր որյուեկտիվ նախարարյաները: Այս պատճառով Արևմտյան Յեվրոպայում և Միացյալ Նահանգներում որակարգի հարց և պրոլետարիատի հեղափոխական կոիլը կապիտալիստական կառավարությունների տապալման,

1 «Սացիալիստական հեղափոխությունը և ազգերի ինքնորոշման իրավունքը» թեղիսները գրված են 1916 թ. մարտի սկզբին, առաջին անգամ տպագրվել են գերմաներեն լեզվով 1916 թ. ապրիլին «Vorhöte» («Նախագուշակ»), ճախ ցիմերվալդյան որդան) ժուռնալում № 2, ոռուերեն լեզվով—1916 թ. Հոկտեմբերին «Сборник Социал-Демократа-յուլ» № 1 (Հրատարակություն ԱՄԴԲԿ ԿԿ-ի): Ներկա հրատարակությամբ թեղիսները տպագրվում են ըստ «Сборник Социал-Демократа-յի բնագրի»:

В. И. ЛЕНИН  
СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕВОЛЮЦИЯ  
И ПРАВО НАЦИЙ НА САМООПРЕДЕЛЕНИЕ  
Армгиз—Издательство полит.  
литературы  
Ереван, 1938

3

բուրժուազիայի եքսպրոպրիացիայի համար։ Իմպե-  
րիալիզմը մասսաներին հրում ե դեպի այլպիսի կոփվ,  
վիթսարի չափերով սրելով դասակարգային հակա-  
սությունները, վատթարացնելով մասսաների դրու-  
թյունը թե՛ տնտեսական—տրեսաներ, թանգություն,—  
թե՛ քաղաքական տեսակետից—միլիոնի աճել,  
պատերազմների հաճախանալը, ռեակցիայի ուժեղանա-  
յը, ադրային ճնշման և գաղութային կողոպուտի ամրա-  
նալն ու ընդարձակվելը։ Հաղթական սոցիալիզմն ան-  
հրաժեշտորեն պիտի իրադրծի լիակատար դեմոկրա-  
տիա և, հետեաբար, վո՛չ միայն պիտի անցկացնի  
ազգային լիակատար իրավահամասարություն, այլև  
իրազործի ճնշված ազգերի ինքնորոշման, այսինքն՝  
ազգայի քաղաքական անջատման իրավունքը։ Այն սո-  
ցիալիստական կուսակցությունները, վորոնք իրենց  
վողջ գործունեյությամբ չեն առաջցնի և՝ այժմ, և՝  
հեղափոխության ընթացքում, և՝ նրա հաղթանակից հե-  
տո, թե իրենք կաղաստագրեն ստրկացրած ազգերին և  
նրանց նկատմամբ հարաբերությունները կառուցեն  
ազգայի միության հիմունքով, —իսկ աղատ միությունը  
առաջ Փրազ ե առանց անջատման աղատության, —այդ-  
պիսի կուսակցությունները դավանանություն կատա-  
րած կէինն սոցիալիզմի հանդեպ։

Իհարկե, դեմոկրատիան նույնպես պետության ձև  
է, վոր պետք ե անհետանա, յերբ կանհետանա պետու-  
թյունը, բայց դա կլինի վերջնականապես հաղթած, և  
ամրակած սոցիալիզմից դեպի լիակատար կոմունիզմ  
անցնելու պահին։

## 2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՊԱՅՔԱՐԸ ԴԵՄՈԿՐԱՏԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Սոցիալիստական հեղափոխությունը մի ակտ չեւ  
մարտ չե մի ճակատում, այլ սրված դասակարգա-  
յին կոնֆլիկտների մի ամբողջ դարաշրջան, կոնֆլիկտի  
մի յերկար շարք՝ բոլոր ճակատներում, այսինքն՝ տըն-  
տեսության ու քաղաքականության բոլոր հարցերում,  
—կոնֆլիկտ, վորոնք կարող են ավարտվել միայն բուր-  
ժուազիայի եքսպրոպրիացիով։ Արմատական սխալ  
կլիներ մտածել, թե հանուն դեմոկրատիայի մրած  
սկայքարն ընդունակ ե սոցիալիստական հեղափոխու-  
թյունից չեղել պրոլետարիատին, կամ քողարկել, մթա-  
գնել այն և այլն։ Ընդհակառակն, ինչպես անհնար  
ե հաղթական սոցիալիզմ, վորը չիրագործի լիակատար  
դեմոկրատիա, նույնպես ել չի կարող նախապատրաստ  
վել բուրժուազիային հաղթելու այն պրոլետարիա-  
տը, վորը համակողմանի, հետեղողական և հեղափո-  
խական պայքար չի մղի հանուն դեմոկրատիայի։

Պակաս սխալ չեր լինի ջնջել դեմոկրատիայի ծրա-  
դրի կետերից մեկը, որինակ՝ ազգերի ինքնորոշման  
վերաբերյալ կետը, և այդ իրը թե այն պատճառով,  
վոր նա «անիրազործելի» կամ «ցնորական» և իմպե-  
րիալիզմի որով։ Այն սկզբումը, թե ազգերի ինքնորոշ-  
ման իրավունքն անիրազործելի յէ կապիտալիզմի սահ-  
մաններում, կարելի յէ ըմբռնել կամ բացարձակ՝  
տնտեսական, կամ պայմանական քաղաքական իմաս-  
տով։

Առաջին դեպքում նա իր հիմքում սխալ և թեո-  
րիապես։ Նախ՝ այդ իմաստով կապիտալիզմի շրջա-  
5

նում անիրազործելի յեն, որինակ՝ բանվորական փողերը կամ կրիզիսների վոչնչացումը և այլն: Բնակչությունը կամ կրիզիսների վոչնչացումը և այլն: Բնակչությունը կամ կրիզիսների վոչնչացումը և այլն:

Տերերորդ՝ նույնիսկ միմիայն Նորվեգիայի 1905 թ. անջատման որինակը Շվեդիայից բարձրական է, վորագեղի հերքի «անիրազործելիությունն» այդ իմաստով: Յերրորդ՝ ծիծաղելի կլիներ բացասել, թե, որինակ՝ Գերմանիայի և Անդիայի քաղաքականու ստրատեգիական փոխարարերությունների փոքրիկ փոփոխումով այսոր կամ վաղը լիովին «իրազործելի» կլինի նոր պետությունների—լեհական, հնդկական և այլն—կազմավորումը: Չորրորդ՝ ֆինանսական կապիտալն իր ծավալման ձգտումների մեջ «ազատ ե» գնելու և կաշառելու ուղածդր թեկուղ և «անկախ» յերկրի՝ ամենաազատ գեմոկրատական և հանրապետական կառավարությունը և ընտրովի պաշտոնյաններին: Ֆինանսական կապիտալի, ինչպես և առհասարակ կապիտալի տիրապետությունն անհնար և վերացնել վորեկ փոխակերպությամբ քաղաքական դեմոկրատիայի բնագավառում: Իսկ ինքնորոշումն ամբողջապես և բացառապես վերաբերում ե այդ բնագավառին: Բայց ֆինանսական կապիտալի այդ տիրապետությունն ամենան չի վոչնչացնում քաղաքական դեմոկրատիայի նշանակությունը, իրեն դասակարգային հարստահարության և դասակարգային պայքարի ավելի ազտու, լայն և պարզ ձևի: Այս պատճառով բոլոր դատողությունները, թե կապիտալիզմի շրջանում տնտեսական իմաստով «անիրազործելի» յե քաղաքական դեմոկրատիայի պահանջներից մեկը, հանդում են կապիտալիզմի և առհասարակ քաղաքական դեմոկրատիայի ընդ-

հանուր և հիմնական հարաբերությունների թեորիապես անձիւտ բնորոշման:

Յերկրորդ դեպքում այդ պնդումը լրիվ չե ճշգրուց չե: Վորովհետեւ վո'չ միայն ազգերի ինքնորոշման իրավունքը, այլ քաղաքական դեմոկրատիայի բոլոր արմատական պահանջներն իմպերիալիզմի որով «իրազործելի» յեն լոկ վոչ լրիվ, այլանդակված ձեռվ և իրեն բացառությունն (որինակ՝ Նորվեգիայի անջատումը Շվեդիայից 1905 թ.): Գաղութների անհապաղ ազատագրման պահանջը, վոր առաջադրում են բոլոր հեղափոխական սոցիալ-դեմոկրատները, նույնպես «անիրազործելի» յե կապիտալիզմի շրջանում առանց մի շարք հեղափոխությունների: Բայց սրանից ամենախն չի բոլոր սոցիալ-դեմոկրատիայի հրաժարումն այդ բոլոր պահանջների համար անհարազ և ամենաավական պայքար մզելուց, —այդպիսի հրաժարումը ձեռնտու կլիներ միայն բուրժուազիային և ուսակցիային, —այլ, հենց ընդհակառակը, բայց ե այն, վոր անհրաժեշտ ե բոլոր այդ պահանջները ձևակերպել ու անցկացնել վո'չ թե ռեֆորմիստորեն, այլ հեղափոխականորեն, չահմանափակվելով բուրժուական լեզարության շրջանակներով, այլ ջարդելով դրանք. չբավարարվելով պառլամենտական յելույթներով ու բանավոր բողոքներով, այլ ակտիվ գործողությունների ասպարեզ քաշելով մասսաներին, ընդարձակելով ու բորբոքելով կոխվը ամեն մի արմատական դեմոկրատական պահանջի համար մինչև պըրլետարիատի ուղղակի գրոհը բուրժուազիայի վրա, այսինքն՝ մինչև սոցիալիստական հեղափոխությունը, վոր պետք ե քսպրոպրիացիայի յենթարկի բուրժուազիային: Սո-

շեալիստական հեղափոխությունը կարող է բոցավառվել վո՛չ միայն խոչոր գործադուլի կամ փողոցային ցույցի կամ սովորական բունակի կամ զինվորական ապատաժբության կամ գաղութային խոռոշության պատճառով, այլև ուզածդ քաղաքական կրիզիսից, ինչպես Դրեյֆուսի գործն եր կամ Յարենի միջադեպը՝ կամ հարստահարված ազգի անջատման հարցի հետ կապված հանրաքվեյից և այլն։

Աղջային ձնչման ուժեղացումն իմպերիալիզմի որով սոցիալ-դեմոկրատիայի համար պայմանավորում և վո՛չ թե հրաժարումն այն «ուստալիական», ինչպես բուրժուազիան և ասում, պայքարից, վորմավում և հանուն ազգերի անջատման ազատության, այլ, ընդհակառակը, ուժեղ ոգտադրծումն կոնֆլիկտների, վորոնք ծագում են նաև այդ հողի վրա,

1 Յարենի միջադեպը (1913 թ. վերջին) Գերմանիայի ռեակտիվն զինվորական կլիկի տիրապետության ուժեղացման ամենափայլուն արտահայտություններից մեկն եր։ Միջադեպի երրորն այն եր, վոր Յարենի փոքրիկ քաղաքում (Ելզաս-Լոթարինդիա) այնտեղ բանակած զերմանական զնդի սպաններից մեկը, լիյունանատ Ֆորսաները սեղական քրանսական լուսալությանը սիստեմատիկորեն հալածում եր և վերջապես միքանի տասնյակ մարդ ձերբակալելով, քաղաքում զինվորական դիկտատորակառատեց, ահ տալով ու տեսորի յենթարկելով Յարենի բնակչությանը։ Զնայած միջնա անդամ բուրժուական կուսակցությունների վրովմունքին՝ Ֆորսաները, հենվելով զինվորական վերին իշխանությունների պաշտպանության վրա, Յարենում շարունակում եր նույն ռեժիմը։ Բայիստագում, ուր այս հարցը փոխարքման, կանցլերն (Բետման-Հոլլենդը) ու ոսպական մինիստրը փոքրում ելին զորավիր կանցնել ու պաշտպանել Ֆորսաներին, բայց ուրիշապէի հաջին մեծամասնությունն անվաստահություն հայտնեց։

Երբեւ առիթներ մասսայական գործողության և հեղափոխական յելույթի համար՝ ընդգեմ բուրժուազիայի։

### 3. ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒԽՆՔԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ՆՐԱ ՀԱՐՄԱՆԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՀԵՏ

Ազգերի ինքնորոշման իրավունքը նշանակում է բացառապես քաղաքական իմաստով անկախության իրավունքը, ճնշող ազգից քաղաքականապէս աղատուցն անջատվելու իրավունքը։ Կոնկրետ կերպով՝ քաղաքական գեմոկրատիայի այս պահանջը նշանակում է աղիսացիայի լիակատար ազատություն հոգուտ անջատման և անջատման հարցի լուծումն անջատվող ազգի հանրաքվեյով (ռեֆերենտումով)։ Այսպիսով այդ պահանջը բնապէ հավասարազոր չե անջատման, տրոհման, մանր պետությունների կազմավորման պահանջն։ Այն լոկ նշանակում է ամեն տեսակ աղգային ձնչման գեմ մղվող պայքարի հետևողական արտահայտություն։ Պետության դեմոկրատական կարգը վորքան մոտ լինի անջատման լիակատար ազատության, այնքան գործնականում հազվադեպ և թույլ կլինեն անջատման ձգտումները, վորովհետև խոչը պետությունների առավելությունները թե՛ տնտեսական առաջադիմության տեսակետից, թե՛ մասսաների շահերի տեսակետից անտարակուտելի յեն, ընդգործում նրանք շարունակ ուժեղանում են կապիտալիզմի աճման հետ։ Ինքնորոշման ճանաչումը հավասարազոր չե Փեղերացիայի, իրեւ սկզբունքի, ճանաչման։ Կարելի յե լինել այդ սկզբունքի վճռական հակառակորդ և

դեմոկրատական կենտրոնացման կողմնակից, բայց  
ազգային անիրավահաւասարությունից գերադասել ֆե-  
դերացիան, իբրև միակ ուղի դեպի լիակատար դեմո-  
կրատական ցենտրալիզմը։ Հենց այս տեսակետից,  
Մարքսը, լինելով կենտրոնացման կողմնակից, անդ-  
լիացիների կողմից խռանդիան բռնի հպատակեցնե-  
լուց գերադասում եր նույնիսկ խռանդիայի Փեղերա-  
ցիան Անդլիայի հետ։

Սոցիալիզմի նպատակն ե վո՛չ միայն վոչնչացնել  
մարդկության տրոհվածությունը մանր պետություն-  
ների և ազգերի ամեն մի առանձնացում, վո՛չ միայն  
ազգերի մերձեցումը, այլև նրանց ձուլելը։ Յեկ հենց  
այդ նպատակին հասնելու համար մենք մի կողմից  
մասսաներին պետք ե բաժատրենք Ռենների և Ռ. Բա-  
ռուերի այսպես կոչված «կուլտուր-աղդային ավտոնո-  
միայի» գաղափարների ուեակցիոն լինելը, իսկ մյուս  
կողմից պահանջնք ճնշված ազգերի ազատագրումը  
վո՛չ թե ընդհանուր ճապաղ ֆրազներով, վո՛չ թե ան-  
բոլվանդակ ճամարտակությամբ, վո՛չ թե հարցը մին-  
չև սոցիալիզմը «հետաձղելու» ձևով, այլ պարզ ու  
ճիշտ ձևակերպված քաղաքական ծրագրով, վոր հատ-  
կապես հաշվի պիտի առնի ճնշող ազգերի սոցիալիստ-  
ների կեղծավորությունն ու յերկշոտությունը։ Ինչ-  
պես վոր մարդկությունը կարող ե դասակարգերի վե-  
րացման համանել միայն ճնշված դասակարգի դիկտա-  
տուրայի անցման շրջանի միջոցով, դրա նման ել աղ-  
գերի անխոռուսակելի ձուլմանը մարդկությունը կազրող  
ե հասնել միայն բոլոր ճնշված ազգերի լիակատար  
ազատազրման, այսինքն՝ նրանց անջատման ազատու-  
թյան անցման շրջանի միջոցով։

#### 4. ԱԶԳԵՐԻ ԻՆՔՈՐՈՇՄԱՆ ՀԱՐՑԻ ՊՐՈԼԵՏԱՐԱԿԱՆ-ՀԵՂԱՓԲԽԱԿԱՆ ԴՐՈՒՅԾԸ

Վո՛չ միայն ազգերի ինքնորոշման պահանջը, այլև  
մեր գեմոկրատական մինիմում-ծրագրի բոլոր կետե-  
րը, առաջ, գեռեւ XVII և XVIII դարերում, առաջա-  
դրված են յեղել մանր բուրժուազիայի կողմից։ Յեղ  
մանր բուրժուազիան մինչև այժմ ուսուվիկ ձևով գը-  
նում ե այդ բոլոր պահանջները, չտեսնելով դաստ-  
կարգային կոփվը և նրա ուժեղացումը գեմոկրատիայի  
որով, հավատալով «խալաղ» կապիտալիզմին։ Հենց  
այդպիսին ե ժողովրդին խարող և կառցկիսականների  
պաշտպանած իրավահավասար ազգերի հաշտ միու-  
թյան ուսուովիան իմպերիալիզմի որով։ Իբրև հակա-  
կան այդ քաղենիական, ուղղությունիստական ուսու-  
պիային՝ սոցիալ-դեմոկրատիայի ծրագիրը պիտի ա-  
ռաջազրի վորպես հիմնականը, ամենաերականը և  
անխոռուսակելին իմպերիալիզմի որով՝ ազգերի բաժա-  
նումը ճնշողների և ճնշվածների։

Ճնշող ազգերի պրոլետարիատը չի կարող սահմա-  
նակալվել լույսանուր, շարլոն, յուրաքանչյուր խա-  
ղաղասեր բուրժուայի կողմից կրկնվող ֆրազներով  
ընդգեմ աննեխսիայի և հոգուտ ազգերի իրավահավա-  
սարության ընդհանրապես։ Պրոլետարիատը չի կարող  
լուսաբանել մանավանդ իմպերիալիստական  
բուրժուազիային «անհաճելի» պետության սահման-  
երի հարցի վրայով, պետության, վոր խարսխված և  
ազգային ճնշման վրա։ Պրոլետարիատը չի կարող չը-  
կովել ճնշված ազգերին բռնությամբ տվյալ պե-  
տության սահմաններում պահելու դեմ, իսկ այդ

Հենց նշանակում ե կովել հոգուտ ինքնորոշման  
իրավունքի: Պրոլետարիատը պիտի պահանջի քա-  
ղաքական անջատման ազատություն այն դադութ-  
ների և ազգերի համար, վորոնց ճնշում ե «իր»  
ազգը: Հակառակ պարագայում պրոլետարիատի ին-  
տերնացիոնալիզմը կմնա սնամեջ և լոկ խոսք. վո՛չ  
վստահություն, վո՛չ ել գասակարգային համերաշ-  
խություն հնարավոր չե ճնշված և ճնշող ազգերի  
բանվորների միջև. ինքնորոշման ուժորմիստական և  
կառուցկարական պաշտպանների կեղծավորությունը, վո-  
րոնք լուսմ են այն ազգերի մասին, վորոնց ճնշում և  
«իրենց սեփական» ազգը և բռնությամբ պահում և  
«իրենց սեփական» պետության մեջ, մնում ե չմեր-  
կացված:

Մյուս կողմից՝ ճնշվող ազգերի սոցիալիստները  
պետք ե մանալանդ պաշտպաննեն և կյանքի մեջ կե-  
րառնեն ճնշված ազգի բանվորների լիակատար ու ան-  
պայման՝ դրա հետ միասին նաև կազմակերպական՝  
միասնությունը ճնշող ազգի բանվորների հետ: Առանց  
դրան բուրժուազիայի բոլոր և ամեն տեսակ նենու-  
թյունների, դավաճանությունների և խարդախու-  
թյունների պայմաններում անհնար և պաշտպանել  
պրոլետարիատի ինքնորույն քաղաքականությունը և  
դասակարգային համերաշխությունը մյուս յերկրների  
պրոլետարիատի հետ: Վորովհետև ճնշված ազգերի  
բուրժուազիան ազգային ազատադրության լողունդ-  
ները միշտ ել դարձնում ե բանվորներին խարելու մի-  
ջոց: Ներքին քաղաքականության մեջ նա այդ լոգունդ-  
ներն ողտագործում ե ուսակցիոն համաձայնություն-  
ներ կնքելու տիրող ազգի բուրժուազիայի հետ (որի-

նակ՝ լեհերն Ավստրիայում և Բուսաստանում, վո-  
րոնք հրեաներին և ուկրաինացիներին ճնշելու համար  
գործարքի մեջ են մտնում ուսակցիայի հետ): Արտա-  
քին քաղաքականության մեջ նա ջանում է գործարք-  
ներից մեկի հետ՝ իր կողովտչական նպատակներն  
իրագործելու համար (մանր պետությունների քաղա-  
քականությունը բավկաններում և այլն):

Այն հանդամանքը, վոր իմպերիալիստական պետու-  
թյուններից մեկի դեմ վարած պայքարը հանուն ազգա-  
յին պատագրության՝ վորոշ պայմաններում կարող  
և ողտագործվել մի ուրիշ «մեծ» պետության կողմից  
իր նույնատեսակ իմպերիալիստական նպատակների  
համար,—նույնքան քիչ կարող և ստիպել սոցիալ-դե-  
մոկրատիային հրաժարվելու ազգերի ինքնորոշման  
իրավունքի ճանաչումից, վորքան, որինակ՝ բուրժու-  
ազիայի կողմից քաղաքական խարեւության և Փինան-  
սական կողովուտի նպատակով հանրապետական լո-  
գունդների ողտագործման բազմաթիվ դեպքերը ռո-  
մանական յերկրներում չեն կարող ստիպել սոցիալ-  
դեմոկրատներին հրաժարվել իրենց հանրապետակա-  
նությունից<sup>1</sup>:

1 Ինչ խոսք, վոր մերժել ինքնորոշման իրավունքն այն պատ-  
ճառով, թե իր նրանից բղխում ե «Հայրենիքի պաշտպանու-  
թյան» թելաղբանք, բոլորավին ծիծակելի կլիներ: Հենց այդպի-  
սի իրավունքով—այսինքն նույնչափ անլուրը—սոցիալ-շուլիստ-  
ները 1914—1916 թ. թ. վկայակոչում են զեմոկրատիայի յու-  
րաքանչյուր պահանջը (որինակ՝ նրա հանրապետականությունը)  
և ազգային ճնշման դեմ մղվող պայքարի յուրաքանչյուր ձեա-  
կերպումը՝ արդարացնելու համար «Հայրենիքի պաշտպանությու-  
նը»: Հայրենիքի պաշտպանության ճանաչումը պատերազմներում,

## 5. ՄԱՐՔՍԻԶՄԸ ՅԵՎ ՊՐՈՒԴՈՆԻԶՄՆ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄ

Իբրև հակակշիռ մանր-բուրժուական դեմոկրատ-ների՝ Մարքսն առանց բացառության բոլոր դեմոկրա-տական պահանջներում տեսնում եր վո՛չ թե արտու-տը, այլ պատմական արտահայտությունն այն պայ-քարի, վոր մղում եյին բուրժուազիայի դեկավարած ժողովրդական մասսաներն ընդդեմ ֆեոդալիզմի։ Այդ պահանջների մեջ չկա և վո՞չ մեկը, վոր վորոշ պայ-մաններում բուրժուազիայի կողմից բանվորներին խա-րելու գործիք չծառայեր և չի ծառայել։ Զատել այդ տեսակետից քաղաքական դեմոկրատիայի պահանջնե-րից մեկը, այն ե՛ ազգերի ինքնորոշումը և այն հա-կադրել մնացածներին—տեսականորեն արմատապես սիսալ ե։ Գործնականում պրոլետարիատը կարող ե իր ինքնուրությունը պահպանել միայն յենթար-կելով իր պայքարը հանուն բոլոր դեմոկրատական պահանջների, բացառություն չանելով և հանրապե-տության պահանջը, բուրժուազիային տապալելու նպատակով մղած իր հեղափոխական պայքարին։

Մյուս կողմից՝ իբրև հակակշիռ պրուզոնիստնե-րին, վորոնք «բացասում եյին» ազգային հարցը «հա-

ռինակ, Ֆրանսական մեծ հեղափոխության կամ Գարեքալդի պատերազմներում, Եվրոպայում, ինչպես և Հայունիքի պաշտ-պանության բացասումը 1914—1916 թ. թ. իմպերիալիստական պատերազմում, մարքսիզմը բղխեցնում ե յուրաքանչյուր առան-ձին պատերազմի կոնկրետ-պատմական առանձնահատկություննե-րի վերլուծությունից, այլ վոչ յերբեք վորևե «ընդհանուր սկզբ-բունքից», ծրագրի վորեւ առանձին կետից։ Նամոքագրության վենիմի։

Նույն սոցիալական հեղափոխության», Մարքսը, նկա-տի ունենալով ամենից ավելի պրոլետարիատի դասա-կարգային կովկի շահերն առաջալոր յերկրներում, ա-ռաջին պլանն եր մղում ինտերնացիոնալիզմի և սոցի-ալիզմի արմատական ոկզեռունքը—չի կարող պատ լինել այն ժողովուրդը, վոր ճնշում ե ուրիշ ժողովուրդների։ Հենց գերմանական բանվորների հեղափոխական շարժ-ման շահերի տեսակետից՝ Մարքսը 1848 թվին պա-հանջում եր, վորպեսզի Գերմանիայի հաղթական զե-մոկրասական հռչակի և իրազործի գերմանացիների կողմից ճնշվող ժողովուրդների աղատությունը։ Հենց անդիմական բանվորների հեղափոխական պայքարի տեսակետից Մարքսը 1869 թ. պահանջում եր իուլիա-դիայի անջատումն Անդլիայից, ընդվորում նա ավե-լացնում եր. «Ենեկուզ գործն անջատումից հետօ նույ-նիսկ ֆեղերացիայի հասնի»։ Միայն այսպիսի պա-պահանջ դնելով եր Մարքսն իրոք ինտերնացիոնալիս-տական վողով զաստիարակում անդլիական բանվորնե-րին։ Միայն այդպիս կարող եր նա հակագրել ոպորտու-նիստներին և բուրժուազիան ուժքորմիզմին, վորը մինչեւ այժմ, կես դար անց, չի իրազործել իուլիանդական «ուժքորմը», ալյալ պատմական ինդրի հեղափոխա-կան լուծումը։ Միայն այդպես՝ ի հակակշիռ կապի-տալի ջատագովներին, վորոնք ճչում են մանր աղ-դերի անջատման աղատության ուտոպիկ լինելու և անիրազործելիության մասին ու առաջադիմական են հռչակում վո՞չ միայն տնտեսական, այլև քաղաքական կոնցենտրացիան, Մարքսը կարող եր վոչ-իմպերիա-լիստականորեն պաշտպանել այդ կոնցենտրացիայի ա-ռաջադիմականությունը, պաշտպանել աղդերի մեր-

Ճեցումը վո՛չ թէ բռնության, այլ բոլոր յերկրների պղոյետարների աղաս միության պատվանդանի վրա։ Մարքսն ազգերի իրավահամասարության և ինքնուշչման՝ խոսքով և հաճախ կեղծավոր ճանաչմանը միայն այդպես կարող եր հակադրել մասսաների հեղափոխական գործողությունը նաև ազգային հարցերի լուծման բնադավառում։ 1914—1916 թ. թ. իմպերիալիստական պատերազմը և նրա միջոցով ոպրտունիստների ու կառուցկիսականների կեղծավորության ավգյան ախոռների մերկացումն ակնառու կերպով հաստատեցին Մարքսի այդ քաղաքականության ճշտությունը, —քաղաքականություն, վորը պետք է որինակ դառնա բոլոր առաջավոր յերկրների համար, վորովհետև նրանցից ամեն մեկը ճնշում է ոտար աղերի<sup>1</sup>։

1 Հաճախ են հենվում, —որինակ՝ վերջին ժամանակներու գրքամանական շովինիստ Լենը «Die Glocke» («Զանդ») պարբերականի № № 8 և 9-ի վրա, վոր Մարքսի բազասական վերաբերմունքը գեղի միքանի ժողովուրդների ազգային շարժումը, որինակ՝ չեփերինը 1848 թ., մարզուղմի տեսակետից հերքում և ազգերի ինքնորոշման ճանաչման անհամաժամությունը։ Բայց այդ ճիշտ, վորովհետև 1848 թվին պատմական և քաղաքական հիմունքներ կային իրարից տարբերելու «ռեակցիոն» և հեղափոխական գեմուրատական ազգերին։ Մարքսն արդարացի յեր, դատապարտելով առաջններին և պաշտպանելով յերկրորդներին։ Ինքնորոշման իրավունքը դեմոկրատիայի պահանջներից մեկն և, վորը, բնականարար, պիտի ստորադասվի դեմոկրատիայի ընդհանուր շահերն առաջն հերթին կայանում ելին ցարելումի գեմ մղվող պայքարի մեջ։ Ծանոթագրություն կենինի։

## 6. ՅԵՐԵԿԻ ՏԻՊԻ ՅԵՐԿՐՆԵՐԻ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՏԵՍԱԿԵՏԻՑ

Պետք է տարբերել յերեք գլխավոր տիպի յերկրներ այս տեսակետից։

Առաջին՝ Արևմտյան Յելլուպայի առաջավոր կապիտալիստական յերկրները և Միացյալ Նահանգները։ Բուրժուական առաջաղիմատիկան ազգային շարժումներն այստեղ վաղուց են ավարտված։ Յուրաքանչյուրն այդ «մեծ» ազգերից ճնշում է ուրիշ աղդերի՝ գաղութներում և յերկրի ներսում։ Տիրապետող ազգերի պրոլետարիատի խնդիրներն այստեղ չենց՝ այնպիսիք են, վորպիսիք Ելին նրա խնդիրներն իուլանդիայի նկատմամբ Անգլիայում՝ XIX դարում<sup>1</sup>։

ՅԵՐԵԿԻ ՏԵՍԱԿԵՏԻՑ  
ՎԵՐԱԿՐՈՒԺՄԱՆ  
ՀԱՅԱՍՏԱՆ

1 Միքանի ժամբ պետություններում, վորոնք մի կողմ են մասնական շովինիստ Լենը պատմականում, որու, Հոլլանդիայում, Շվեյցարիայում, բուրժուազիան ուժգնապես ոգտագործում և «ազգերի ինքնորոշման» լողունգը՝ իմպերիալիստական պատերազմին մասնակցելու արդարացնելու համար։ Այդ մեկն և այն ժողովներից, վորոնք այդպիսի յերկրների սոցիալ-գեմոկրատիային հրում են զեպի ինքնորոշման բացասաւում։ Ճիշտ պրոլետարական քաղաքականությունը, այն և՝ «Հայրենիքի պաշտպանության» բացասաւում իմպերիալիստական պատմականում են անհիշտ փառտարկումներով։ Թերիայում ստացվում է ժարքսիզմի խեղաթյուրում, իսկ գործնականում իր տեսակի մանր-ազգային սահմանափակություն, մռացումն այն ազգերի հարյուր-միլիոնավոր բնակչության մասին, վորոնց ստրկացեր են «մեծտպետական» ազգերը։ Բնիկը Գորեկըն իր «Իմպերիալիզմը, պատերազմը և սոցիալ-գեմոկրատիան» հոյակապ գրքույկում սիալլուստ եր՝ բացասական ազգերի ինքնորոշման սկզբունքը, բայց ուղիղ և կիրառում այն, յեր պահանջում ե Հոլլանդական Հնդկաստանի անմիջական քաղաքական և ազգային անկախությունը» և մերկացնում և հոլլանդական ոպորտունիտներին, վո-

Յերկրորդ՝ Յեվրոպայի արևելքը—Ավստրիան, Բալկանները և Ֆանավանդ Ռուսաստանը։ Այստեղ հենց XX դարին առանձնապես զարգացրել է բուրժուազմության կրատական ազգային շարժումները և սրբել ազգային պայքարը։ Այս յերկրների պրոլետարիատի խնդիրները, թե՛ նրանց բուրժուազմության փոխակերպության ավարտման խնդրում, թե՛ նաև մյուս յերկրների սոցիալիստական հեղափոխության ողնելու գործում, չեն կարող իրազործվել, առանց պաշտպանելու ազգերի ինքնորոշման իրավունքը։ Առանձնապես դժվար և առանձնապես կարևոր ե այստեղ ճնշող և ճնշված ազգերի բանվորների գասակարգային կովկի միացման խնդիրը։

Յերրորդ՝ կիսազգությային յերկրները, վորպեսիք են Չինաստանը, Պարսկաստանը, Թյուրքիան և բոլոր զալութները՝ չուրջ մինչև 1000 միլ. բնակչություն։ Այստեղ բուրժուազմության կրատումները մասամբ հազիվ են սկսվում, մասամբ գեռ առենիներին չեն ավարտված։ Սոցիալիստները վո՛չ միայն պիտի պահանջեն զալութների անպայման, առանց փրկանքի և անհասաղ աղատագրումը, — իսկ այդ պահանջն իր քաղաքական արտահայտությամբ նշանակում է վոչ այլ ինչ, բայց յեթե հենց ինքնորոշման իրավունքի ճանաչումն. սոցիալիստները պետք է ամենավճռական ճեռվ պաշտպանեն այդ յերկրների բուրժուազմության կրատական ազգային-զարգատղական շարժումների ամենից ավելի հեղափոխական տարրե-

բոնք հրաժարվում են այդպիսի պահանջ առաջարելուց և նրա համար կովկուց։ Ծանրքագրություն կենիք։

Քին և ոգնեն նրանց ապատամբությանը, իսկ հարկը պահանջած գեղքում նաև նրանց հեղափոխական կըռ-վլին—ընդդեմ նրանց ճնշող իմպերիալիստական պետությունների։

## 7. ԱՊՑԻԱԼ-ՇՈՎԻՆԻԶՄԸ ՅԵՎ ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ

Իմպերիալիստական դարաշրջանը և 1914—1916 թվերի պատերազմն առանձնապես առաջ են մղել առաջավոր յերկրներում շովինիզմի և նացիոնալիզմի զեմ մղվելիք պայքարի խնդիրը։ Ազգերի ինքնորոշման հարցում յերկու գլխավոր յերանդ կա սոցիալ-շովինիստների, այսինքն ուղղորդունիստների և կառուցկի-ականների շարքերում, վորոնք իմպերիալիստական, սեակցիոն պատերազմը գունազարդում են՝ կիրառելով նրա նկատմամբ «հայրենիքի պաշտպանության» հասկացողությունը։

Մի կողմից՝ մենք տեսնում ենք բուրժուազիայի բավական բացորոշ սպասավորներ, վորոնք պաշտպանում են աններսիսները համուն այն բանի, թե իմպերիալիզմը և քաղաքական կոնցենտրացիան առաջանայի են, և բացասում են իբր ուսուպիսական, պատրանքային, մանր-բուրժուազման և այլն՝ ինքնորոշման իրավունքը։ Սրանց թվին են պատկանում Կունակը, Պարվուսը և ծայրահեղ ուղղորդունիստները Գերմանիայում, արեղ-յունիստների առաջնորդների և Փարիսիայների մի մասն Անդլիայում, ուղղորդունիստները Ռուսաստանում—Սեմկովսկին, Լիբանը, Յուրկիվչը և այլն։

Մյուս կողմից՝ մենք տեսնում ենք կառուցկական-ներին, վրոնց թվին են պատկանում նույնպես Վանդերվելդեն, Ռենովելը և շատ պացիֆիստներ Անդլիայում և Ֆրանսիայում և այլն։ Նրանք կողմնակից են ժիասնության առաջնների հետ և գործնականում լինվին համընկնում են նրանց, պաշտպանելով ինքնորոշման իրավունքը լոկ բառերով ու կեղծավորությամբ։ Նրանք «չափազանց» են համարում («zu vie verlangt»; Kautsky «Neue Zeit»—ում<sup>1</sup>, 1915 թ. մայսի 21) քաղաքական անջևաման ազատության պահանջը, նրանք չեն պաշտպանում հեղափոխական տակտիկայի անհրաժեշտությունը հենց ճնշող աղղերի սոցիալիստների համար, այլ, ընդհակառակը, շաբաշում են նրանց հեղափոխական պարտավորությունները, արդարացնում են նրանց ողորոտունիդը, հեշտացնում են նրանց կողմից ժողովրդին խարելը, խուսափում են հատկապես պետության սահմանների հարցից, պետության, վոր բանությամբ իր կաղմի մեջ և պահում անիրավահարար աղղերին և այլն։

Թե՛ նրանք, թե՛ մյուսները հավասարապես ոպորտունիստներ են, վորոնք պոռնկացնում են մարքսիզմը, կորցնելով ամեն մի ընդունակություն ըմբռնելու Մարքսի՝ իռլանդիայի որինակով լուսաբանած տակտիկայի թեորիական նշանակությունը և գործնական կենսականությունը։

Ինչ վերաբերում է մասնավորապես աննեքսիանե-

<sup>1</sup> Կառցկին «Նոյե Յայտ»—ում (գերմանական սոցիալ-դեմոկրատի թեորիական որդանը)։

քին, ապա պատերազմի առնչությամբ նշանց հարցն առանձնապես ակտուալ ե դարձել։ Բայց ի՞նչ ե աննեքսիան։ Հեշտ ե համոզվել, վոր բողոքն աննեքսիաների գեմ կամ' հանդում ե ազգերի ինքնորոշման ճանաչման, կամ' խարսխվում ե պացիֆիստական ֆրազի վրա, վորը պաշտպանում է status quo-ն և թշնամի յի ամեն մի, անդամ հեղափոխական, բոնության։ Նման Փրազն իր հիմքում կեղծ ե և անհաշտելի մարքսիզմի հետ։

## 8. ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԻ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԸ Ս.ՄԵՆԱՄՈՏԻԿ Ա.ՊԱԳԱՅԱՅՈՒՄ

Սոցիալիստական հեղափոխությունը կարող է ակսվել ամենամոտիկ ապագայում։ Պրոլետարիատի առջև այդ գեղքում կծառանա անմիջական խնդիր՝ նվաճել իշխանությունը, եքսպրոպրիացիայի յենթարկել բանկերը և իրագործել ուրիշ դիկտատորական միջոցներ։ Բուրժուազիան—և մանավանդ Փարիսական ու կառցեկան տիպի ինտելիգենցիան—կջանա այդպիսի մոմենտում տրոհել և արգելակել հեղափոխությունը, նրա վզին փաթաթելով սահմանափակ, դեմոկրատական նպատակներ։ Յեթե բոլոր զուտ դեմոկրատական պահանջներն ընդունակ են վորոշ իմաստով խոչընդոտի դեր խաղալու հեղափոխության մեջ, այն դեպքում, յերբ արդեն սկսվել ե պլոյետարեների դրույթութուազիայի իշխանության հիմքերի դեմ, ապա բոլոր ճնշված ժողովուրդների աղատությունը (այ-

<sup>1</sup> «Status quo»—իրերի գոյություն ունեցող գրությունը։

սինքն նրանց ինքնորոշման իրավունքը) հռչակելու և կենսագործելու անհրաժեշտությունը նույնպես կենսական կլինի սոցիալիստական հեղափոխության մեջ, ինչպես այն կենսական եր բուրժուազեմոկրատական հեղափոխության հաղթության համար, որինակ՝ թերմանիայում 1848 թվին կամ Ռուսաստանում 1905 թվին:

Հնարավոր ե, սակայն, վոր մինչև սոցիալիստական հեղափոխության սկիզբ անցնի 5, 10 և ավելի տարի: Հերթի դրված կլինի մասսաների հեղափոխական դաստիարակությունն այնպիսի վորով, վորպեսզի անկարելի դարձվի սոցիալիստական չովինիստների և ուղղորդունիստների բանվորական կուսակցությանը պատկանելը և նրանց հաղթությունը՝ նման 1914—1916 թվերի հաղթությանը: Սոցիալիստները պարտավոր պիտի լինեն բացատրելու մասսաներին, թե անդինիան սոցիալիստները, վորոնք չեն պահանջում գաղութների և իռլանդիայի անջատման ազատություն, գերմանական սոցիալիստները, վորոնք չեն պահանջում գաղութների, ելզացիների, դանիացիների, լեհերի անջատման ազատություն, վորոնք չեն ծավալում անմիջական հեղափոխական պրոպագանդա և հեղափոխական մասսայական գործողություններ նաև աղջային ճնշման դեմ վարած պայքարի բնագավառում, վորոնք չեն ոգտագործում այնպիսի միջադեպերը, ինչպիսին ե Ցարերնինին՝ ճնշող աղջի պրոլետարիատի շարքերում ամենալայն անկեղալ պրոպագանդա մղելու, փողցային ցույցերի և մասսայական հեղափոխական յերւյթների համար, —ուղղուական սոցիալիստները, վորոնք չեն պահանջում ֆինլանդիայի, լեհաստանի,

Ավկրախնայի և այլն և այլն անջատման աղաւությունը, —թե այդպիսի սոցիալիստները վարվում են իրենց շովինիստներ, իրեն լակեյներ, վորոնք իրենց ծածկել են իմպերիալիստական միապետությունների և իմպերիալիստական բուրժուազիայի արյունով ու ցեղով:

### 9. ՌՈՒՍՈ.ՍՏԱՆՅԱՆ ՅԵՎ ԼԵՀԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆՅԻ ՌԻ Ա.ԻՆՏԵՐՆԱ- ՅԻԱՆՍԱԼԻ ՎԵՐՍ.ԲԵՐՄՈՒՆ.ԲԼ ԴԵՊԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ

Տարածայնություններն ինքնորոշման հարցի շուրջը Ռուսաստանի հեղափոխական սոցիալ-դեմոկրատիայի միջև դրսուրպել են դեռ 1903 թվին, համագումարում, վորն ընդունել ե ԱՄԴԲԿ ծրագրը և վորը, հակառակ լեհական սոցիալ-դեմոկրատների պատգամավորության բողոքին, այդ ծրագրի մեջ մտցրել ե ազգերի ինքնորոշման իրավոնքը ճանաչող § 9: Այդ ժամանակից սկսած լեհական սոցիալ-դեմոկրատներն իրենց կուսակցության անունից վոչ մի անդամ չեն կրկնել մեր ծրագրից § 9-ը հանելու կամ վորեւ այլ ձևակերպումով փոխարինելու առաջարկը:

Ռուսաստանում, վորտեղ ճնշված ազգերին և պատկանում բնակչության 57 %-ից վոչ պակասը, 100 միլիոնից ավելի, —վորտեղ այդ ազգերը առավելապես բնակված են ծայրագավառներում, —վորտեղ այդ ազգերի մի մասն ավելի յէ կուլտուրական, քան վելիկոսուները, —վորտեղ քաղաքական կարգը աչքի

յե զարնում իր առանձնապես բարբարոսական և միջնադարյան բնույթով, —վորտեղ չեւ ավարտված դեռ քուրժուա-դեմոկրատական հեղափոխությունը, —մուսաստանում սոցիալ-դեմոկրատիայի համար՝ հանուն նրանց դեմոկրատական և սոցիալիստական խնդիրներ՝ անտայման պարտադիր և ճանաչել ցարիզմի կողմից ճնշված ազգերի ազատ անջաման իրավունքը Թուսաստանից: 1912 թ. հունվարին վերականգնված մեր կուսակցությունը 1913 թ. ընդունեց բանաձև, վոր հաստատում և ինքնորոշման իրավունքը և լուսարանում և այն հենց վերը մատնանշված իր կոնկրետ նշանակությամբ: Վելիկոռոսական շովինիզմի սահմարձակությունը 1914—1916 թվականներին, ինչպես բուրժուազիայի, այնպես ել ոպորտունիստ-սոցիալիստների (Ռուբանովիչ, Պլեխանով, «Ապօ» և այլն), շարքերում ել ամենի յեւ դրդում մեղ պնդելու այն պահանջի վրա և ընդունելու, վոր այն գործնականում բացասազները ծառայում են վորակես նեցուկ վելիկոռոսական շովինիզմին: Մեր կու-

1 Նկատի յեւ առնված հետեւյալ աեզն ազգային հարցին վերաբերյալ այն բանաձևից, վորն ընդունելոց ԱՄԴԲԿ ԿԿ-ի՝ կուսակցական աշխատողների հետ կայացրած «ամսաւյն» (1913 թ.) Խորհրդակցության կողմից.

«4) Ինչ վերաբերում և ցարական միապետության կողմից ճնշված ազգերի ինքնորոշմանը, այսինքն՝ անշատվելու ու ինքնուրույն պետություն կազմելու իրավունքին, ապա սոցիալ-դեմոկրատական կուսակցությունն այս իրավունքն անպայմանորեն պետք և պաշտպանի: Այս են պահանջում ինչպես միջազգային գեմոկրատիայի հիմնական սկզբունքներն ընդհանրապես, այսպես ել, առանձնապես, թուսաստանի բնակչության մեծամասնության անլուր ազգային ճնշումը ցարական միապետության կողմից, վորն իրենից ներկայացնում և ամենառեակցիոն ու բարբա-

սակցությունն ազգաբարում ե, վոր նա ամենավճռական կերպով մերժում և վորեւ պատասխանատվություն ինքնորոշման իրավունքի դեմ յեղած նման յերւութիւնի համար:

Լեհական սոցիալ-դեմոկրատիայի՝ ազգային հարցում ունեցած դիրքի նորագույն ձևակերպման մեջ (լեհական սոցիալ-դեմոկրատիայի գելլարացիան Ցիմմերվալդի կոնֆերենցիալում<sup>1)</sup>) կան հետևյալ մտքերը.

Այդ գելլարացիան խարանում և գերմանական և մյուս կառավարություններին, վորոնք «լեհական մարզերը» նկատում են իրեւ զրավական առաջիկա կոմպենսացիաների խաղում, «Ենի ժողովրդին զրկելով իր բախտը տնօրինելու հնարավորությունից»: «Լեհական սոցիալ-դեմոկրատիան վճռականորեն և հանդիսավորապես բողոքում և մի ամբողջ յերկիր վերածնելու և մասերի բաժանելու դեմ»... Նա խարազանում և այն սոցիալիստներին, վորոնք Հոհենցոլ-

րոս պետական կարգը՝ համեմատած Յելքոպայի ու Ասիայի հարեւեան պետությունների հետ: Այնուհետև այս և պահանջում հենց վելիկոսության ազատության դորձը, բնակչության, վորն անհնդունակ և դեմոկրատական պետություն ստեղծելու, յեթե չլունչացվի սեհարցուրյակային վելիկոռուսական նացիոնալիզմը, վորը պահանջում և ազգային շարժումների հետ արգած մի շարք արյունալի գաւառատանների տրադիցիայով և սիստեմատիկորեն զարգացվում վուշ միայն ցարական միապետության ու բոլոր սեհացիոն կուսակցությունների կողմից, այլ և միապետության առաջ սուրբարչություն անող վելիկոռուսական բուրժուական միերալիզմի կողմից, առանձնապես հակածեցագոփության զարգացմանում»:

1 Խնտերիացինախալիստների Ցիմմերվալդի կոնֆերենցիան տեղի յեւ ունեցել 1915 թվի սեպտեմբերին: Կոնֆերենցիայում, ցենտրիստական մեծամասնության դեմ մղած պայքարում, կազ-

Հերներին ևն վերապահել... «ննշված ժողովուրդների ազատագրության գործը»: Նա հայտնում է, վորհամոզված ե, թե միայն միջազգային հեղափոխական պրոլետարիատի այդ վերահսա պայքարին մասնակցելը, պայքար հանուն սոցիալիզմի, —միայն դա «կատրատի ազգային ննշման կապանքները և կվոչընշացնի ոտարերկրյա տիրապետության բոլոր ձևերը, կապահովի լին ժողովրդին՝ իրեւ ժողովուրդների ժիռթյան իրավահավասար անդամի՝ բազմակողմանի աղատ զարգացման հնարավորություն»: Դեկլարացիան պատերազմը ճանաչում է «կրկնակի յեղբայրասպան» «Եկեղեկի համար» («Միջազգային սոցիալիստական հանձնաժողովի բյուլետեն» № 2, 1915 թ. սեպտ. 27, էջ 15. ուսւերեն թարգմանությունը՝ «Интернационал и воинская ծովովածուի մեջ, էջ 97):

Ազգերի ինքնորոշման իրավունքի ճանաչումից այդ դրույթները վոչնչով չեն տարբերվում ըստ եյության, միայն տառապում են քաղաքական ձևակերպումների և ավելի մեծ ճապաղությամբ և անորոշությամբ, քան Ա Ինտերնացիոնալի ծրագրերի ու բանաձեւերի մեծամասնությունը: Ամեն մի փորձ՝ արտահայտելու այդ մտքերը ճշգրիտ քաղաքական ձևակերպումներով և բնորոշելու նրանց գործադրելիությունը կապիտա-

ժամուրվեց «ցիմքերվալյան ձախը» լենինի գլխավորությամբ ըլմամերվալդյան ձախի մեջ եյին մտնում—ՌՍԴԲԿ կուն (բոլշևիկներ), լեհաստանի ու լիտվայի սոցիալ-դեմոկրատիայի Յերկրային քարչությունը (Ռազեկն ու ուր.), գերմանական, անորվեստական, չվեյցարական և ուրիշ ինտերնացիոնալիստների ներկայացուցիչները: Մի շաբաթ հարցերի նկատմամբ, այդ թվում ազգային հարցի նկատմամբ, լեհական սոցիալ-դեմոկրատները տարակարծիք եյին բոլչեկների հետ:

Հիստորիան կամ միայն սոցիալիստական հասարակակարգի նկատմամբ՝ ե՞լ ավելի ակնառու կերպով ցույց կտա ազգերի ինքնորոշումը բացասելու սխալը լեհ սոցիալ-դեմոկրատների մոտ:

Լոնդոնի 1896 թ. միջազգային սոցիալիստական կոնֆերանսի վորոշումը, վորհանաչում ե ազգերի ինքնորոշումը, պետք ե վերը շարահյուսած թեղիսների հիման վրա լրացվի հետեւյալ ցուցումներով.—1) այդ պահանջի առանձին խիստ կենսականությունն իմաստավայրի որով, 2) քաղաքական դեմոկրատիայի բուրուր պահանջների, վորոնց թվում և տվյալ պահանջի քաղաքական պայմանականությունը և դասակարգային բավարարացմանը, 3) ճնշող ազգերի սոցիալ-դեմոկրատների կոնկրետ ինդիքները տարբերելու անհրաժեշտությունը՝ ճնշված ազգերի սոցիալ-դեմոկրատների խնդիրներից, 4) ոպորտունիստների և կառուցկիականների կողմից ինքնորոշման անհետևողական, զուտ ռառերով և գրա զորությամբ իր քաղաքական նշանակությամբ կեղծալորաբար ճանաչելը, 5) սոցիալ-դեմոկրատների, մանավանդ մեծապետական ազգերին պատկանող սոցիալ-դեմոկրատների (վելիկոռուսներ, անգլո-ամերիկացիներ, գերմանացիներ, Փրանսացիներ, իտալացիներ, ճապոնացիներ և այլն) փաստական համանմանությունը չովինիստներին,—այն սոցիալ-դեմոկրատների, վորոնք չեն պաշտպանում «իրենց» ազգերի կողմից ճնշող գաղութների և ազգերի անհատման ազատությունը, 6) տվյալ պահանջի, ինչպես և քաղաքական դեմոկրատիայի բոլոր արմատական պահանջների համար մղվող պայքարի ստորագրաման անհրաժեշտությունը անմիջական հեղտափո-

Խական մասայական պայքարին՝ հանուն բուրժուական կառավարությունների տապալման և հանուն սցիալիզմի կենսագործման:

Միքանի փոքր ազգությունների և մանավանդ լեզողիալ-դեմոկրատների հայացքները ինտերնացիոնալին վերաբերելու, —այն սոցիալ-դեմոկրատների, վորոնց՝ իրենց պայքարը ժողովրդին նացիոնալիստական լոգունդներով խարող լեհական բուրժուազիայի դեմ՝ հասցրել եր մինչև ինքնորոշման ժխտումը, կլիներ թեորիական սխալ, մարքսիզմի փոխարինումը պրուդոնդմով, իսկ գործնականում կնշանակեր մեծապետական ազգությունների ամենավտանգավոր շովինիզմի և ոպորտունիզմի ակամա աջակցություն:

ՌՍԴԲԿ կենտրոնական որգան  
«Социал-Демократ»-ի խմբագրություն:

Հետ գրության: Հենց նոր լույս տեսած «Neue Zeit»-ի 1916 թ. մարտի 3-ի համարում կառցկին բացեիրաց քրիստոնեյական հաշտության ձեռք և մեկնում գերմանական ամենակեղոստ չովինիզմի ներկայացուցիչ Առատերլիցին, մերժելով հարսրուրդյան Ավատրիայի համար ճնշված ազգերի անջատման ազատությունը, բայց ճանաչելով այն ոռուական լեհատանի համար, վորակեսզի Հինդենբուրդին և Վիլհելմ Ա-ին լակեյական ծառայություն մատուցի: Ավելի լավ ինքնամերկացում կառցիւականության համար դժվար ել կլիներ ցանկանալ:

Տմբագիր Հ. Դանյան  
Տեխն. խմբագիր Ս. Խաչատրյան  
Երբագրիչ Վ. Զիդեցյան  
Կոնարու ոլբագրիչ Լ. Աբովյան


Գլավիտի լիազոր № 4—3287, հրատ. № 579  
Պատվեր № 92, մերած 10.000  
Հանձնված և արտադրության 20/V 1938 թ.  
Ստորագրված և տպագրելու 7/VI 1938 թ.  
Գինը 30 կ.

Գեահրատ—Քաղաքական գրականության հրատարակչության  
տպարան, Երևան, Ալավերդյան № 65

ՀՀ Ազգային գրադարան



NL0184035



382

нр 30 ч.

В. И. ЛЕНИН

Социалистическая революция и право  
наций на самоопределение

Асмгэз—Издательство полит.  
литературы, Ереван, 1938